



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1471-Ս

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ԳԱՎԱՌԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1. մասի 11)-րդ կետով, ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» 26.03.2020թ. թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ կետով, որոշում եմ

1. Գավառի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Գավառի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթը անցկացնել 2023 թվականի սեպտեմբերի 12-ին:
2. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմին իրականացնելու «Գավառի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2023թ. օգոստոսի 07
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1472-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 84 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՄԿՐՏԻՉ ԼԵՎՈՆԻ
ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 21.07.2023թ. տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափազորման տվյալների մուտքագրման 2023BDEMGC ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, ինքնակամ շինարարական աշխատանքներն իրականացրած անձ՝ Գավառ քաղաքի Արծրունի եղբայրների փողոց 84 բնակելի տուն հասցեի սեփականատեր /սեփ. վկայական N 24082015-05-0004, տրված 24.08.2015թ./ Մկրտիչ Լևոնի Սիրունյանի /ծնված 15.05.1959թ./ դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.05695 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ

1. Գավառ քաղաքի Արծրունի եղբայրների փողոց 84 բնակելի տուն հասցեում գտնվող, 2016թ. ինքնակամ կառուցված 108.2 քմ արտաքին /89.3 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը և 4.5 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը 112.7x1209=136300 /մեկ հարյուր երեսուկվեց հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման իրավունք սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը հաստատվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից հանդիսանալու օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2023թ. օգոստոսի 04
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1473-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-001-0814-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ
50,2489 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ
ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի մրցույթային հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 14-ի արձանագրությունները, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N13042022-05-0037, տրված 2022 թվականի ապրիլի 13-ին անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից), 05-001-0814-0005 կադաստրային ծածկագրով 50,2489 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի արոտավայրը տարեկան 50 300 /հիսուն հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով 2031 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Սիմոն Վոլոդյայի Գափոյանին:
2. Սիմոն Վոլոդյայի Գափոյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:
3. Հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Ռուբեն Կոխպեցյանին՝ օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20.23 թ. *օգոստոսի 23*
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1474-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-001-1167-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ 4,95828 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 14-ի արձանագրությունները, *որոշում եմ*

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական 15042022-05-0034, տրված 2022 թվականի ապրիլի 15-ին անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից), 05-001-1167-0026 կադաստրային ծածկագրով 4,95828 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտավայրը տարեկան 12400 /տասներկու հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով 2046 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրել մրցութում հաղթող ճանաչված Սերգեյ Մարտինի Սարգսյանին:
2. Սերգեյ Մարտինի Սարգսյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:
3. Հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Ռուբեն Կոխպեցյանին՝ օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2023 թ. *օգոստոսի 08*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1475-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-001-0658-0034 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ՕԱԾԿԱԳՐՈՎ 0,444ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՎԱՐԵԼԱՆՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 14-ի արձանագրությունները, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական NO4032022-05-0046, տրված 2022 թվականի մարտի 4-ին անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից), 05-001-0658-0034 կադաստրային ծածկագրով 0,444 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողը տարեկան 2800 /երկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով 2046 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրել մրցութում հաղթող ճանաչված Ռուբիկ Վաչագանի Հովակիմյանին:
2. Ռուբիկ Վաչագանի Հովակիմյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:
3. Հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Ռուբեն Կոխպեցյանին՝ օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2023 թ. օգոստոսի 07
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1476-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՍՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին 14 մարտի 1997թ. N 51 որոշման ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, որոշում եմ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանին տրամադրել Գավառ համայնք Ազատության փողոց 35-րդ շենք բնակարան թիվ 11 հասցեն:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2023թ. օգոստոսի 07
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1477-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, 07 հուլիսի 2023 թ-ի հողամասի մրցույթային կարգով վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու N 6-1 արձանագրության, «Կասել սիուննա» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Արթուրի Սիմոնյանի 27 հուլիսի 2023թ. Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, **որոշում է**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդկունք բնակավայրի <<Սևան Ազգային Պարկ>> ՊՈԱԿ-ի սեփականություն հանդիսացող 4,83326 հա մակերեսով հողամասին տրամադրել Գավառ համայնք Բերդկունք բնակավայր Սայրուղու փողոց թիվ 18 հողամաս հասցեն:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2023թ. օգոստոսի 07
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavar.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1478-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՍՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության Գեղարքունիքի Մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 13 հուլիսի 2006թ. N 1176-Ն որոշումը, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումը, **որոշում եմ**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-001-0294-0001/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել 0.00540 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, Ազատության 2-րդ փողոց, 4-րդ անցուղի, թիվ 6 հասցեն:
2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2023թ. օգոստոսի 07
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1479-Ա


ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐՈՒԽԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ռ.ԽԵՔՈՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԶԱԼԻԿ ՖՈՒՐՄԱՆԻ ԽԵՔՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 20.07.2023թ. տրված Սարուխանի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.04.1992թ. թիվ 8 և 28.05.1993թ. թիվ 11 որոշումներից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 29.06.2023թ./ գույքի նկատմամբ ժառանգ Զալիկ Ֆուրմանի Խեքոյանի /ծնված 20.05.1968թ./ դիմումը, Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Սարուխան բնակավայրի Ռ.Խեքոյան փողոց թիվ 6 հասցեում գտնվող հողամասը չափազրվել է, հատկացվել է 0.16 հա, ինչը փաստացի կազմում է 0.15886 հա, որը Զալիկ Ֆուրմանի Խեքոյանին /ծնված 20.05.1968թ./ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 266.10 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1936-1999թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.15886 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի Սարուխան բնակավայրի Ռ.Խեքոյան փողոց թիվ 6 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Զալիկ Ֆուրմանի Խեքոյանի /ծնված 20.05.1968թ./ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.15886 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 266.10 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1936-1999թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սարուխան բնակավայր, Ռ.Խեքոյան փողոց, թիվ 6 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԲՈՇՅԱՆ



2023 թ. սեպտեմբեր 07
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 1480-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 24), «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 190-Ն որոշման 10-րդ կետը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի 2023 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

04 բաժնի 2 խմբի 4 դասի /ոռոգում/ գործառնական դասակարգման 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածով պլանավորված 2 000 000 / 2 միլիոն/ ՀՀ դրամը պակասեցնել 225 000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամով, որն ավելացնել նույն գործառնական դասակարգման 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածին՝ Նորատուսի պոմպակայանի պոմպի շարժիչի նորոգման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2023թ. *օգոստոսի* *04*
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1481-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՃԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 22 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ԱՆԱՀԻՏ ԺՈՐԱՑԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ԼԻԱՆԱ
ՄԵԶԼՈՒՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԶԼՈՒՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ԱԼԻՆԱ
ՄԵԶԼՈՒՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹՈՐ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի,
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակառավարման
կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ
Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ
Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի և ՀՀ
Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական
բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման,
անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի
համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և
հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ
լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն
պահանջներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի
/որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 13.07.2023թ. տրված
ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների
մուտքագրման 2023XQPWZB ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված
հողամասի և շինությունների հատակագծերը, ինքնակամ շինարարական աշխատանքներն
իրականացրած անձ՝ Գավառ համայնքի Լճափ բնակավայրի 1-ին փողոց 22 հասցեի
համասեփականատեր /սեփ. վկայական N 07072023-05-0023/ Անահիտ Ժորայի Խաչատրյանի
/ծնված 07.09.1962թ./ դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ
անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում
քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.28400 հա հողամասը չի գտնվում ՀՀ
հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և
ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,
շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական
խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ

1. Գավառ համայնքի Լճափ բնակավայրի 1-ին փողոց 22 հասցեում գտնվող, 2016թ. ինքնական կառուցված 60.3 քմ արտաքին /45.6 քմ ներքին/ մակերեսով խանութը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1748 /մեկ հազար յոթ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ, ընդամենը $60.3 \times 1748 = 105500$ /մեկ հարյուր հինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Լճափ բնակավայր, 1-ին փողոց, թիվ 22 հասցեն:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20²³ թ. օգոստոսի 07
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1483-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 10-ԸՆԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 8
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԽԱՉԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական
Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական
ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ.
«Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն
պահանջներով, հիմք ընդունելով 27.07.2023թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և
սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի
ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 25.07.2023թ./ գույքի նկատմամբ ժառանգ Խաչիկ
Կարապետի Հակոբյանի /ծնված 22.02.1953թ./ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի
կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ
համայնքի Հացառատ թաղամասի Պետրովի փողոց 10-րդ նրբանցք թիվ 8 հասցեում գտնվող
հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.11 հա, ինչը փաստացի կազմում է 0.09040 հա, որը
Խաչիկ Կարապետի Հակոբյանին /ծնված 22.02.1953թ./ ժառանգության իրավունքով պատկանող
հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 220.6 քմ ընդհանուր մակերեսով շենք-
շինությունների /կառուցված 1953-1983թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ
0.09040 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված
սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների
օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Պետրովի փողոց 10-րդ նրբանցք թիվ 8 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Խաչիկ Կարապետի Հակոբյանի /ծնված 22.02.1953թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.09040 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 220.6 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1953-1983թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Պետրովի փողոց, 10-րդ նրբանցք, թիվ 8 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2023թ. դեկտեմբեր 08
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1484-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ 2-Դ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՐ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԷԼՅԱ ԳՐԻՇԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՄԱՐԻԱՄ ՍԶԵՐԻ ԶԱՔՈՅԱՆԻ ԵՎ
ՄԱՐՈՒՍՅԱ ՍԶԵՐԻ ԶԱՔՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եվ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 26.12.2002թ. ՀՀ ՇՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով, որ 1998թ. մայիսի 08-ին տրված N 205601 հողի սեփականության իրավունքի պետական ակտի համաձայն Գրիգոր Զաքոյանին սեփականության իրավունքով հատկացվել 2.18 հա հողամաս և հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 01.11.2017թ./ Գրիգոր Զաքոյանի ժառանգ էլյա Գրիշայի Հարությունյանի /ծնված 24.04.1967թ./, Մարիամ Միերի Զաքոյանի /ծնված 29.02.1992թ./ և Մարուսյա Միերի Զաքոյանի /ծնված 03.04.1994թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, որի համաձայն Գավառ համայնքի Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափազորվել է /ծածկագիր 05-001-0451-0012/, և նկատի ունենալով, որ Գավառ համայնքի Բարեկամության 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6 հասցեի հողամասը փաստացի կազմում է 0.29878 հա և ընտանիքի կողմից փաստացի տիրապետվող 0.29878 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, որոշում եմ

1. Վերականգնել Գավառ համայնքի Բարեկամության 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6 հասցեում գտնվող՝ Էլյա Գրիշայի Հարությունյանի /ծնված 24.04.1967թ-ին/; Մարիամ Մհերի Զաքոյանի /ծնված 29.02.1992թ./ և Մարուսյա Մհերի Զաքոյանի /ծնված 03.04.1994թ./ հողօգտագործման իրավունքը իրենց կողմից փաստացի տիրապետվող՝ 0.29878 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Հողամասին տրամադրել Գավառ համայնք քաղաք Գավառ Բարեկամության 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 6 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2023թ. օգոստոսի 08
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1485-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

